

Չորեքշաբթի
14 հուլիսի 2021թ.
№ 13 (555)

ՀԻՍՏԱԿԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՐ
«ՍՅՈՒՆԻՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՒԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՔ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ:
ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468
2 1 0 1 3 >
9 771829 346006

Սյունյաց Երկիր

www.syuniacyerkir.am



Ոչ մի պարագայում չի կարելի Սյունիքով տրանսպորտային միջանցք տրամադրել Ադրբեջանին, եթե այն փոքր-ինչ անգամ շրջանցելու է Հայաստանի ինքնիշխանությունը

Հարցազրույց Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների թեկնածու Վարդան Ոսկանյանի հետ:

– Պարոն Ոսկանյան, կցանկանայի՞ք նախ ներկայացնել հայ-իրանական հարաբերությունների ներկա մակարդակը, ձեր դիտարկումները:

– Ընդհանուր առմամբ՝ հայ-իրանական հարաբերությունները պահպանվում են բարիդրացիական որոշակի մակարդակի վրա,

բայց մենք ունենք նաեւ խնդիրներ, որոնք պայմանավորված են տարածաշրջանում ստեղծված վիճակով, եւ այդ իրավիճակը թելադրում է իրանական կողմը, որ ավելի մեծ ակտիվություն դրսեւորի ոչ միայն հարավ-կովկասյան տարածաշրջանում ընդհանրա-
Հարունակությունը՝ էջ 3

Պղնձամուլիբդենայինն ազգայնացնելն ուղղակի քաղաքական հայտարարություն է. սպասենք նոր կառավարության ձևավորմանը

7-րդ գումարման ԱԺ պատգամավոր, Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Բաբկեն Թունյանը կարծում է, որ այսօր կարող ենք խոսել տնտեսական ճգնաժամի հարթահարման մասին, բայց այն նախաճգնաժամային վիճակում չէ: Եւրոն է՝ տնտեսական աճի վերաբերյալ կանխատեսումները վերանայվել են գրեթե կրկնակի, ինչը մեծ հույսեր է ներշնչում: Դիտարկմանը, թե պետական պարտքը 2020-ին կազմել է 7 մլրդ 969 մլն ԱՄՆ դոլար: Այն իր մեծությամբ հասել է կառավարելի միջակայքի

շեմը, պետությունը ինչպե՞ս է պատկերացնում պարտք-ՅՆԱ հարաբերակցության վերադարձը 60 տոկոսից ցածր միջակայքի, Թունյանը արձագանքում է. «Մենք պետական պարտք վերցնելու տեղ դեռ ունենք, բայց տնտեսությունը պետք է ավելի արագ աճի, քան պարտքը: Մենք աշխատում ենք հենց այդ ուղղությամբ»: Անդրադառնալով նախընտրական խոստումներին, թե որոշ հանքարդյունաբերական ընկերություններ, այդ թվում՝ ՉՊՄԿ-ն ազգայնացվելու են, Թունյանը մանրամասնում է. «Պղնձամուլիբդենայինն ազգայնացնելն



ուղղակի քաղաքական հայտարարություն է. սպասենք նոր կառավարության ձևավորմանը»:

02.07.2021թ.

Թեթևացել է սաստիկ նժարը իրավունքներիս, Անիրավության կողմը՝ ծանրացել...

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ,
Մատյան ողբերգության,
Բան 7, Ա

Հայաստանի հարավում իրավիճակի սրումը «սահմանային միջադեպ» է և չի համապատասխանում հավաքական պաշտպանության մասին ՀԱՊԿ կանոնադրության դրույթներին

Հայաստանի հարավում իրավիճակի սրումը՝ կապված Ադրբեջանի հետ նոր սահմանի հաստատման հետ, «սահմանային միջադեպ» է և չի համապատասխանում հավաքական պաշտպանության մասին ՀԱՊԿ կանոնադրության դրույթներին: Այդ մասին, ինչպես փոխանցում է ՏԱՍՍ գործակալությունը, լրագրողներին ասել է կազմակերպության գլխավոր քարտուղար Ստանիսլավ Չասը:

«Պետք է հասկանալ, որ ՀԱՊԿ ներուժն օգտագործվում է միայն [անդամ երկրներից մեկին ուղղված] ագրեսիայի, հարձակման դեպքում: Այստեղ գործ ունենք, ըստ էության, սահմանային միջադեպի հետ: Փառք Աստծո, գոհեր չկան, կրակոցներ չկան: Սա սահմանային միջադեպ է, այն պետք է լուծվի, և մենք կողմ ենք այն խաղաղ ճանապարհով լուծելուն», – ասել է նա:

Ըստ նրա գնահատականի՝ հակամարտության սրում չկա:

«Ստիպված չենք խոսել այն մասին, որ հիմա իրավիճակն ինչ-որ կերպ սրվում է: Սա արդեն լավ է, սա արդեն արդյունք է: Առջևում շատ աշխատանք կա սահմանի խնդրի լուծման առումով, բայց դրանք պետք է լուծվեն բանակցությունների սեղանի շուրջ», – նշել է Չասը:

ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը տեղեկացրել է նաև, որ կազմակերպությունը Հայաստանի՝ մայիսյան դիմումից հետո, խորհրդակցություններ է անցկացրել երկրի սահմանամերձ շրջաններում տիրող իրավիճակի վերաբերյալ: «Նման խորհրդակցություններ անցկացվել են պաշտպանության նախարարների, անվտանգության խորհուրդների քարտուղարների մակարդակով, և ես կապվել եմ ինչպես Հայաստանի արտաքին գործերի նախարարի, այնպես էլ պաշտպանության նախարարի հետ: Մենք քննարկել ենք այս իրավիճակը: Բացի այդ, այս իրավիճակի քննարկում ենք ունեցել ՀԱՊԿ արտաքին գործերի նախարարների խորհրդի նիստում, որն անցկացվել է Դուշանբեում», – ասել է նա:

Չասը հավաստիացրել է, որ ՀԱՊԿ-ը մշտապես մշտադիտարկում է իրավիճակը Հայաստանի հարավում: «Դիտորդական խումբ ստեղծելու մասին որոշում չի ընդունվել, չնայած, իհարկե, իրավիճակը վերահսկվում է», – ասել է գլխավոր քարտուղարը:

Կազմակերպությունն անհրաժեշտ տեղեկատվությունը ստանում է բազմաթիվ աղբյուրներից, այդ թվում՝ հայկական կողմից և ռուս խաղաղապահներից, հավելել է նա:

»



Կապան-Տաթև. կիսատ մնացած ավտոմայրուղին վերաշինվում է



Ինչո՞ւ եւ ինչպե՞ս Սյունիքը հասավ այս հանգրվան

Քաջարանի համայնքի ղեկավար Մանվել Փարամազյանը կալանավորված է:

Մեղրու համայնքի նախկին ղեկավար Մխիթար Չաբարյանը կալանավորված է: Մեղադրանք է առաջադրվել նաև Մեղրու համայնքապետի տեղակալի եւ համայնքապետարանի գլխավոր մասնագետին:

Քարահունջի վարչական ղեկավար Լուսինե Ավետյանը կալանավորված է:

Որոտանի վարչական ղեկավար Սուրեն Օհանջանյանը կալանավորված է:

Գորիսի Գուսան Աշոտի ան-

վան մշակույթի կենտրոնի տնօրեն Հայկ Խաչատրյանը հրաշալի երիտասարդն ու կազմակերպիչը կալանավորված է:

Գորիսի համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանի հանդեպ մի քանի մեղադրանք է ներկայացված: Քրեական գործ է հարուցվել նաև Գորիսի համայնքապետարանում կատարված վերջին ստուգումների արդյունքների հիման վրա:

Միսիանի համայնքապետ Արթուր Սարգսյանին անձեռնախելիությունից զրկելու միջնորդություն է ներկայացվել ԿԸՀ:

Կապան-Նորաշենիկ-Աղվանի ճանապարհի կարելությունը, դեռ ավելին, հույժ անհրաժեշտությունը զգացվել է դեռևս Արցախյան առաջին պատերազմի տարիներին, երբ Կապանը պարբերաբար հրետակոծվում էր, եւ վտանգավոր էր դարձել Կապան-Գորիս ավտոմայրուղով երթևեկությունը: Այս ճանապարհով էին տեղափոխվում առաջին անհրաժեշտության ապրանքներն ու զինամթերքը...

Անցյալ տարի սկսվեց այս ճանապարհի Աղվանի-Տաթև հատվածի վերակառուցումը...

Չնայած մեծ կարելությանը՝ Կապան-Աղվանի-Տաթև ճանապարհի կառուցումը դիտարկվում է որպես Մ-2 Գորիս-Շուշուկ-Կապան ավտոմայրուղին հակառակորդին թողնելու կամ Մ-2-ի անվտանգությունը խաթարելու հեռահար քայլ: Իսկ Կապանում այդ ճանապարհի կառուցումն անվերապահորեն են ընդունում, նաեւ երկար սպասված են ցանկալի քայլ հատկապես Նորաշենիկի ձորի գյուղերի վերակենդանացման համար՝ Աղվանի, Տանձավեր, Վերին եւ Ներքին Խոտանաններ, Նորաշենիկ, Շրվենանց: Մեկ այլ հանգամանք էլ կա՝ այդ ճանապարհը Սյունիքի հոգեւոր կենտրոն Տաթևի վանքը Կապանի եւ Մեղրու տարածաշրջանների հետ կապող ամենակարճ ուղին է:

Հուրախություն Նորաշենիկի ձորի բնակավայրերի բնակիչների եւ այդ տեղով երթևեկող վարորդների՝ հունիսի 10-ից սկսվել է Կապանի Սյունիք բնակավայրի խաչմերուկից մինչեւ Շրվենանցի խաչմերուկ 12.6 կմ ճանապարհահատվածի վերակառուցումը:

Ճանապարհաշինարարներին այցելեցինք հուլիսի 7-ին: Իրականացված հողային աշխատանքներն անգնեց չեղել էլ տեսանելի են, ճանապարհը նաև զգալիորեն լայնացել է: Ճանապարհահատվածի 10-րդ կիլոմետրում հզոր տեխնիկական ճանապարհի ասֆալտի սառը մշակում էր կատարում: Հսկա ցեմենտատար մեքենան Նոր-Նոր ժամանել էր՝ ճանապարհաշինարարներին հասցնելով այդքան անհրաժեշտ շինանյութը:

Աշխատանքներն իրականացնում է «Քարավան» ՍՊ ընկերությունը, որ գրանցված է Արցախի Հանրապետությունում եւ մասնաճյուղ ունի Եղեգնաձորում: «Քարավանը» ճանապարհաշինարարական աշխատանքներ է իրականացրել Արցախում, մեր գրուցակցի փոխանցմամբ՝ Արցախի ճանապարհների 80 տոկոսն իրենց ընկերությունն է վերջին տարիներին կառուցել, ինչպես նաև Արցախի օդանավակայանը: Անցյալ տարի ընկերությունը ճանապարհաշինական աշխատանքներ էր իրականացնում Արարատի մարզի Չանգակատուն գյուղի հարեանությունը:

Սյունիք-Շրվենանց ճանապարհահատվածի շինարարության պատասխանատու Ալիկ Ալեքսանյանը տեղեկացնում է, որ վերակառուցվող ճանապարհը կունենա 7.2 մետր լայնությամբ ասֆալտեթոնե ծածկ եւ կդասվի երրորդ կարգի ճանապարհների թվին: Արդեն լավ ճանապարհի դառնալու Նշաններն ակնառու են...

«Նախագծային թերություններ ծագում են», - հարցնում ենք Ալիկ Ալեքսանյանին:



«Անհար է, որ չծագեն, բայց շատ չեն: Դրանք օպերատիվորեն վերացվում են վերադաս կազմակերպության եւ նախագծողների հետ համագործակցելով», - տեղեկացնում է մեր գրուցակիցը եւ հավելում, որ մի քանի օրից կավարտեն ճանապարհի սառը մշակումը եւ կսկսեն ասֆալտապատումը, որը կտեւի 1.5 ամիս:

Վերակառուցվող ճանապարհի շինարարության որակը հսկվում է: «Սուֆետ» ՍՊ ընկերության հսկիչ Արմենակ Պետրոսյանը տեղեկացնում է, որ մինչեւ օրս աշխատանքներն իրականացվել են առանց շեղումների եւ նախատեսված ժամանակացույցի համաձայն:

Մեր այցելության օրն աշխատանքներում ընդգրկված էր 30 մարդ: Գործում էին տարբեր տեսակի տեխնիկաներ:

Ալիկ Ալեքսանյանի փոխանցմամբ՝ իրենք մոտակա բնակավայրերի վարչական ղեկավարներին տեղյակ էին պահել, որ կարող են տեղացիներ ընդունել աշխատանքի, բայց առայժմ իրենց դիմել է երկու հոգի, որոնց ընդունել են եւ որոնք միացել են «Քարավանի» շինարարներին:

Ի դեպ, ասֆալտն ու խիճը տեղական կազմակերպությունները պիտի մատակարարեն:

1,2 մլրդ դրամ արժեցող ճանապարհաշինական աշխատանքների ավարտ է սահմանված նոյեմբերի 10-ը:

ՎԱՅՈՒՍ ՕՐԲԵԼՅԱՆ



Սյունիքում նոր ոստիկանապետներ են նշանակվել

Ռոստիկանապետ Վահե Ղազարյանը Սյունիքում նոր ոստիկանապետ է նշանակվել:

Ռոստիկանության Կապանի բաժնի պետ է նշանակվել ոստիկանության գնդապետ Արա Դավթյանը: Ռոստիկանության Գո-

րիսի բաժնի պետ է նշանակվել ոստիկանության փոխգնդապետ Ալեն Կարապետյանը: Ռոստիկանության Միսիանի բաժնի պետ է նշանակվել ոստիկանության փոխգնդապետ Կարեն Սերոբյանը:

Ոչ մի պարագայում չի կարելի Սյունիքով տրանսպորտային միջանցք տրամադրել Ադրբեջանին, եթե այն փոքր-ինչ անգամ շրջանցելու է Հայաստանի ինքնիշխանությունը

Սկզբը՝ էջ 1

պես, այլևս հատկապես Հայաստանում, ու այդ մասին պարբերաբար հայտարարում են թե՛ իրանցի վերլուծաբանները, թե՛ նաեւ պաշտոնատար անձինք, նույնիսկ ամենաբարձր մակարդակով: Մասնավորապես խոսքն առնչվում է Իրանի արտգործնախարարի հայտարարություններին, որից դատելով՝ կարելի է ենթադրել, որ իրանցիները փորձ են անում մասնակից դառնալ հարավ-կովկասյան գործընթացներին, բանի որ թուրքական ակտիվացման պայմաններում իրանցիները, ըստ էության, ձգտում են ներկայ լինել այդ գործընթացներում եւ որպես հիմնական հարթակ դիտարկում են Հայաստանի Հանրապետությունը՝ նաեւ ելնելով սեփական կենսական շահերից, իսկ այդ կենսական շահերը ենթադրում են սերտ հարաբերություններ ունենալ Հայաստանի Հանրապետության հետ՝ հատկապես Իրանի հետ սահմանակից Սյունիքի մարզի զարգացման տեսլականը նկատի ունենալով, որովհետեւ հենց այդ մարզի միջոցով է, որ իրականացվում են ոչ միայն Հայաստան- Իրան, այլ նաեւ Իրան-ԵԱՏՄ առևտրատնտեսական կապերը: Իրանի անվտանգային խնդիրների մի խոշոր հատված նույնպես վերաբերում է հենց հայ-իրանական սահմանին:

– **Նոյեմբերի 9-ի կապիտուլյացիոն փաստաթղթից հետո ռազմաքաղաքական նոր իրողություններ են ստեղծվել տարածաշրջանում. Ադրբեջանի համար իրավիճակի մի ընկալում կա, մեզ համար՝ մեկ այլ: Մի դեպքում Իրանի արտգործնախարարն Ադրբեջանին շնորհավորում է տարածքների ազատագրման առիթով, մի այլ դեպքում այլ բան ասում հայերիս: Ներկայացրեք, խնդրեմ, նոր ռազմաքաղաքական իրողության իրական ընկալումը:**

– Իրանցիներն աշխատում են որպես գերտերություն, իսկ գերտերության շահերը ենթադրում են, որ անիրազեկ է հարաբերություններ ունենալ հավանաբարության բոլոր կողմերի հետ: Հետևաբար՝ իրանցիներն աշխատում են նաեւ Ադրբեջան կոչվող հանրապետության հետ, եւ այդ աշխատանքը միտված է Իրանի համար լուծելու երկու կարևորագույն խնդիր՝ հնարավորինս ապահովել իրանադրբեջանական սահմանի անվտանգությունը, որովհետեւ Արցախի տարածքների բռնագավառի հետեւանքով այդ տարածքներում հայտնվել են ահաբեկիչներ, եւ հիմա դժվար է ասել՝ արդյո՞ք ահաբեկիչները մնացել են այնտեղ, թե՞ դուրս են բերվել: Իսկ իրանցիների համար դա կենսական կարևորությունն է խնդիր է: Երկրորդ՝ Ադրբեջանում Իրանն ունի համակիրների մեծաթիվ բանակ, խոսքը վերաբերում է շիաական ընդդիմությանը, որի հետ աշխատանքներ Իրանն իրականացրել է մի բանի տանալով շարունակ: Ուստի չի կարող Ադրբեջանի իր աջակիցներին թողնել միայնակ: Հետևաբար՝ իրանցիները փորձում են Ադրբեջանի հետ արտաբնական բարդիրացիական հարաբերությունների միջոցով ներկայություն ունենալ Ադրբեջանի ներսում, որպեսզի նախ՝ կառավարելի պահեն շիաական ընդդիմությունը, որը, իմիջիայրոց, ամենակատիվն է Ապշերոյան թերակղզում, եւ երկրորդ՝ հնարավորինս շատ տեղեկատվություն ունենալ սահմանային իրավիճակի վերաբերյալ՝ կապված ահաբեկիչների առկայության հետ: Որպես հիմնական գործիքակազմ՝ իրանցիները փորձում են օգտագործել նաեւ (ադրբեջանական եզրաբանությամբ) այսպես կոչված ազատագրված տարածքներում ենթակառուցվածքների վերականգնմանը մասնակցությունը: Բայց գիտե՞ք, որ այդ մասնակցությունն Իրանի պարագայում իրականացնում են Իսլամական հեղափոխության



այցբախտ

Վարդան Ոսկանյանը 1989-1994 թթ. սովորել է ավարտել է Երեւանի պետական համալսարանի արեւելագիտության ֆակուլտետը, այնուհետեւ սովորել է 33 գիտությունների ազգային ակադեմիայի Արեւելագիտության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1997 թվականից դասախոսում է ԵՊՀ արեւելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնում: 2017 թվականից նույն ամբիոնի դոցենտ է, 2014 թ. մինչեւ այժմ՝ ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունների շրջանակը ներառում է հնդիրանական լեզուները եւ բարբառները, իրանական կրոնները եւ մշակույթը, Իրանի պատմությունը, մերձավորարեւելյան էթնիկ-դավանական հանրությունները եւ այլն:

պահապանների կորպուսի հատուկ ստորաբաժանումները (շինարարական, ինժեներական), ինչը նաեւ ակնհայտ նպատակ է հետապնդում՝ ծանոթանալ, տեղեկատվություն հայթայթել արցախահրանական երբեմնի սահմանի այն հատվածի իրավիճակի վերաբերյալ, որ այժմ բռնագավառված է Ադրբեջանի կողմից:

– **Հայաստանի հանդեպ ակնհայտորեն տարածքային նկրտումներ, հավակնություններ է ներկայացնում Ադրբեջանը, ինչը բացառում է Թուրքիան: Եվ, բնականաբար, դրանք տարածքներ են, որոնց հանդեպ չպետք է որ անտարբեր լինի Իրանը: Այդ երկիրը կոնկրետ դիրքորոշում հայտնում է Թուրքիայի եւ Ադրբեջանի տարածքային նկրտումների հանդեպ, թե՞...**

– Մենք ականատես եղանք Իրանի չափազանց կոշտ արձագանքին, երբ Բաքվում տեղի ունեցած հետպատերազմյան տիրահռչակ շեղբի ժամանակ Երողյանի կողմից հնչեցվեց Իրանի տարածքային ամբողջականության նկատմամբ բացահայտ կամ գրեթե բացահայտ հավակնություն: Երողյանն արտասանեց բանաստեղծություն, որն անթաքույց միտված էր Իրանի հյուսիսի թյուրքալեզու շրջաններին: Գիտե՞ք՝ Ատրպատական Իրանի տարածք է, եւ ադրբեջանաթուրքական մեծ Թուրանի ստեղծման հավակնություններն այդ պատրանքի շրջանակում վերաբերում են նաեւ Ատրպատականին: Իրանական կողմի արձագանքը շատ կոշտ էր եւ, ի դեպ, դա տեղի ունեցավ նաեւ արտգործնախարարի մակարդակով: Բայց իրանցիներն աշխատում են շատ հետաքրքիր տրամաբանությամբ: Նրանք շատ դեպքերում արձանագրում են հակաիրանական նկրտումները, բայց պատասխանելու հարցում մեծ շտապողականություն չեն դրսևորում, եւ պատասխանը հասցնում են անակնկալ կերպով ու անսպասելի պահին:

– **Ուզում ենք անդրադառնալ մեզ հուզող կարեւորագույն խնդրին՝ այսպես կոչված շանգեզուրի միջանցքին: Հայաստանի վարչապետը նախընտրական շրջանում քանիցս բացառեց այդ մի-**

ջանցքի ստեղծման հավանականությունը, իսկ նույն օրերին, նաեւ մինչեւ հիմա, Ադրբեջանն ու Թուրքիան պնդում են այդ ծրագրի կարևորությունն ու անխուսափելիությունը. մի տեսակ հակասություն կա Հայաստանի դեկլարարի ասածի եւ թշնամական երկու երկրի հավակնությունների միջև:

– Մենք որպես հիմք պիտի ընդունենք Նոյեմբերի 9-ի տիրահռչակ հայտարարությունը, որտեղ առանձին կետով (երբ խոսվում է տարածաշրջանում հաղորդակցության ուղիների ապաշրջափակման մասին) հստակ շեշտադրվում է Ադրբեջանի արեւմտյան շրջանների եւ Նախիջեւանի Ինքնավար Հանրապետության միջեւ ցամաքային կապի ապահովման խնդիրը: Թեպետ բառացի այդտեղ միջանցք բառը գործածված չէ, բայց... Դիցուք Հայաստան-Ռուսաստան կապի անհրաժեշտությունն ուղղակիորեն շեշտված չէ այդ կետում, այլ նշված է հանգամանքը, որ Ադրբեջանը ցամաքային հաղորդակցություն պետք է ունենա Նախիջեւանի հետ, ինչը տեղ է թողնում զանազան մեկնաբանությունների համար: Եվ այդ (չափերտավոր) մեկնաբանություններով հանդես են գալիս թե՛ Ադրբեջանում, թե՛ Թուրքիայում, ընդ որում՝ թուրքական կողմից ամենաբարձրաստիճան պաշտոնյաների մակարդակով հայտարարվել է, որ այդ (չափերտավոր) շանգեզուրյան միջանցքը պակաս կարեւոր չէ, քան (իրենց եզրաբանությամբ) Արցախի տարածքների ազատագրումը: Հետևաբար՝ այս համատեքստում պետք է շատ ուշադիր լինենք, որովհետեւ կարող է տեղի ունենալ մի պարզունակ խորամանկություն: Այդ, միգուցե այդ կապի ապահովման առումով միջանցք եզրույթն ուղղակի չկիրառվի, բայց, ըստ էության, ստացվի այնպես, որ ունենանք մի տարածք, որը դուրս կլինի Հայաստանի ինքնիշխանությունից: Հետևաբար՝ շատ հստակորեն պետք է հայտարարվի՝ որեւէ միջանցք Սյունիքի տարածքով չի լինելու, եւ Հայաստանի ինքնիշխան տարածքի որեւէ հատված չի կարող դուրս մնալ հանրապետության ինքնիշխանության շրջանակներից:

– **Դուք ճիշտ նկատեցիք օգտագործվող եզրույթների տարբերությունը. շատ**

տարակուսելի հանգամանք կա իսկապես. Հայաստանի վարչապետն անընդհատ օգտագործում է «հաղորդակցության ուղիների ապաշրջափակում» արտահայտությունը, ադրբեջանական կողմը կրկնում է «Շանգեզուրի միջանցք» եզրույթը: Արդյո՞ք դա եզրույթների սուկական տարբերություն է:

– Միանշանակորեն պետք է մերժվի այդ (չափերտավոր) միջանցքի գաղափարը, այն պետք է խեղդվի խանձարով: Հայաստանի Հանրապետությունը որեւէ պարագայում չի կարող թույլ տալ իր ինքնիշխան տարածքի որեւէ մասի, նույնիսկ ամենափոքր հողակտորի նկատմամբ Հայաստանի ինքնիշխանության սահմանափակում կամ բացառում: Եվ սա շատ հստակ պիտի արձանագրվի նաեւ հասարակական մակարդակում, որպեսզի տարակուսների կամ թյուրընկալումների տեղ այլեւս չլինի, սա պետք է հստակորեն գիտակցեն Ադրբեջանն ու Թուրքիան: Ծանապարհների, հաղորդակցության ուղիների ապաշրջափակման ծրագիր կարող է լինել, բայց այդ ծրագիր սահմաններում Հայաստանի Հանրապետության որեւէ ինքնիշխան տարածք չպետք է դուրս մնա նրա վերահսկողությունից: Սա կլինի ավելի եական ձեռքբերում ադրբեջանաթուրքական դաշինքի համար, քան նույնիսկ իրենց ռազմական հաջողություններն էին 2020-ի պատերազմում:

– **Դարոն Ոսկանյան, այժմ Սյունիքի հանդեպ միջազգային հետաքրքրություններն այլեւս անթաքույց են, եւ Սյունիքում բախվում են աշխարհի ամենախոշոր տերությունների շահերը: Ճի՞շտ են մեր ընկալումները:**

– Միանշանակ ճիշտ են ձեր ընկալումները: Կա մի կարեւոր հանգամանք, տեսե՞ք՝ փաստորեն տարիներ շարունակ նաեւ արտաքին ուժերը մեզ ստիպում էին հավատալ, թե՛ Հայաստանը, մանավանդ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզն անկարելու մի տարածք է աշխարհաքաղաքական եւ տարածաշրջանային ծրագրերի առումներով: Այժմ հասկանալի է դառնում, որ ՀՀ-ն եւ հատկապես Սյունիքի մարզը թե՛ աշխարհաքաղաքական, թե՛ առևտրատնտեսական, թե՛ անվտանգային առումներով, չափազանց կարեւոր մի կետ է, ըստ էության կարեւորագույն մի խաչմերուկ, որտեղ խաչվում են բազմաթիվ տերությունների շահեր, որոնց թվում են Իրանը, Ռուսաստանը, Թուրքիան, Ադրբեջանը, նույնիսկ եվրոպական երկրները: Գիտե՞ք, որ Եվրամիությունն էլ, կարծեք, նախատեսում է որոշակի ներկայություն ունենալ սյունիքյան գործընթացներում: Իրանցիներն էլ ուղղակիորեն հայտարարել են, նաեւ բարձր մակարդակով, որ իրանական ներկայությունը (ընդ որում չի շեշտվում՝ արդյո՞ք այդ ներկայությունը բացառապես տնտեսական է, թե՞ քաղաքական, կամ նման ցանկությունը բացառապես տնտեսական տիրույթում է, թե՞ քաղաքական) պետք է անպայմանորեն լինի Սյունիքում: Կարծում եմ՝ սա կարեւորագույն խաղաքարտ է Հայաստանի ձեռքում, որովհետեւ ակնհայտ է՝ Սյունիքն ունի կենսական կարեւորություն համաշխարհային զարգացումների համատեքստում:

– **Գիտե՞ք ինչն է տարօրինակ... Աշխարհի խոշոր տերությունները, ունենալով այդքան հետաքրքրություններ, հայտարարություններ են անում Սեւ լճի տարածքի օկուպացման անթույլատրելիության առումով, որ տեղի ունեցավ մայիսի 12-ին: Բոլորը բարձրաձայնում են՝ Ադրբեջանը դուրս պիտի գա Հայաստանի ինքնիշխան տարածքից, բայց ցայսօր Ադրբեջանի օկուպացիոն ուժերը գտնվում են Սյունիքի մարզի այդ հատվածում, եւ, կարծեք, վերջը չի երևում: Մեր իշխանությունները, որքանով հասկացանք նախընտրական բարոզարշավի հռետորաբանությունից, սպասում են, որ խաղաղ ճանապարհով, դիվանագիտական խողովակներով հարցը լուծվի, բայց... Եվ ոչ միայն այդ հարցը չի լուծվում, այլեւ Սյունիքի արեւելյան սահմանի ամբողջ երկարությամբ՝ գրեթե օր չկա, որ մեր անասնապահների, դաշտավարների հետ որեւէ միջադեպ չպատահի: Հետո՞...**

– Շատ կարեւոր մի հանգամանք՝ երբ դու ցանկանում ես, որպեսզի բեզ աջակցեն, ինքդ պիտի դառնաս խաղացող տվյալ գործընթացում: Եթե Հայաստանի Հանրապետության այսօրվա իշխանությունները որեւէ ձգտում

Ուխտագնացություն Լեռնահայաստանի Սպարապետ Գարեգին Նժդեհի գերեզման, որ Սյունյաց աշխարհի Սպիտակավոր Աստվածածին վանքի տարածքում է

2021 թվականի հուլիսի 3-ն ընդմիջտ տեղ կգտնի «Սյունյաց երկիր», ինչպես եւ (վստահ եմք) Գորիսի համայնքապետարանի տարեգրության մեջ: Այդ օրը տողերիս հեղինակը եւ Գորիս համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանն առաջին անգամ ու համատեղ ուխտագնացություն կատարեցին Գարեգին Նժդեհի գերեզման:

Վայքում մեզ միացան բանաստեղծ Վարդգես Խանոյանը (Տերմուկից) եւ «Արշակունի» ռազմամարզական հասարակական կազմակերպության նախագահ Արտավազ Կարդանյանը (Վայքից): Մինչ այդ Գորիսում մեզ էին միացել Լեւոն Հովսեփյանը, Արման Մարտիրոսյանը (յուսանկարիչ), Արթուր Միխայելյանը, Հարութ Սիլանյանը, Գարիկ Առուշանյանը եւ, իհարկե, Սոֆի Լազարյան թոռնուհին:

Վաղուց երազած ուխտագնացությունը հենց հիմա ի կատար ածելու պատճառը հայտնի հանգամանքն է՝ ապրիլի 26-27-ին լրացել է Լեռնահայաստանի անկախության հռչակման 100-ամյակը, որը թեւեւ պետական մակարդակով չէր շնչվեց, բայց շարունակում է մնալ սյունիքյան հանրության ուշադրության կենտրոնում:

Օրն էլ պատահական չէր ընտրված՝ հուլիսի 3-ին Հայ առաքելական եկեղեցին Նշում էր Առաքյալների տոնը, եւ մենք բաղձանք ունեինք բարեխոս ունենալ ոչ միայն Սպիտակավոր Աստվածածինը, այլեւ Առաքյալներին:

Սպիտակավոր Աստվածածին ճանապարհվեցինք ոչ ավանդական երթուղով՝ Եղեզնածոր քաղաք-Գլաձոր գյուղ-Վերնաշեն...

Մենք Մալիշկա գյուղից շարժվեցինք դեպի հյուսիս: Եվ առաջին կանգառն Արկազի Սուրբ Խաչ վանքն էր: Այդ սրբավայրը համահայկական հռչակ է ունեցել եւ ունի: Ըստ ավանդագրույցի՝ Սյունյաց Բյուրեղ տիկինը (իշխանուհին) «Հունաց Յերակլ կայսրից, Պարսկաստանի արշավանքի դարձին, խնդրեց եւ ստացավ Կենաց փայտի (խաչի) մի մասը եւ նրա վրա հիմնեց վանքը»:

Արկազի Սուրբ Խաչում, որ Նորոգվել է ըստ պատշաճի, հանդիպեցինք բազմաթիվ ուխտավորների: Այնտեղ մեզ ընդառաջ եկավ Բագրատ քահանա Ֆարիչյանը, ով այս սրբավայր ապաշխարության էր եկել Կրասնոդարից: Բագրատ քահանան մեզ առաջնորդեց այն խորան, որի ընդերքում է Կենաց խաչի մատուցը:

Արկազի Սուրբ Խաչից հեռախոսագրույց ունեցանք Հայ առաքելական եկեղեցու Վայոց ձորի թեմի առաջնորդ Աբրահամ Եպիսկոպոս Մկրտչյանի հետ, ով, իրազեկ դառնալով մեր նպատակին, ողջունեց նախաձեռնությունը եւ բարեհաջող ուխտագնացություն մաղթեց:

Ուխտավորներիս հաջորդ կանգառը Թանաթ վանքն էր, որ գտնվում է Վերնաշեն գյուղի մերձակայքում: Ըստ գիտական վարկածի՝ Թանաթն Թանահասուն է (չժիողթել Ծղուկ գավառի Թանահաստի վանքի հետ): Ըստ մեկ այլ ենթադրության՝ Թանաթն Գլաձորի վանքն է (չժիողթել Գլաձոր գյուղի հետ), որն իբր Աղբերաց վանքն է եղել:

Մենք ոչ միայն մոմավառություն կատարեցինք սրբավայրում, ոչ միայն ծանոթացանք մերձակայքի ավերակներին, այլեւ վերիիշեցինք Գլաձորի համալսարանի պատմության որոշ դրվագներ:

Այն, իբրեւ համալսարան, ձեռագրերում հիշատակվում է 1291-ից, գոյատևել է մինչև 1340-ական թթ.: Վերածել է Աղբերաց վանք ուսումնագիտական կենտրոնից, որը գլխավորում էր Ներսես Մշեցի մեծ գիտնականը:

Հիշեցինք համալսարանի բազմամյա ղեկավար (միջև 1331 թ.) Եսայի Լչեցուն: Հիշեցինք նաեւ Սուրբ Հովհան Որոտնեցուն, ով հետագայում, Գլաձորի համալսարանի ավանդույթների հիման վրա եւ այդ համալսարանը փակվելուց հետո, հիմնադրեց Տաթևի աշխարհափոխակ համալսարանը:

Մեր երրորդ կանգառը Վերնաշեն գյուղի Սուրբ Հակոբ եկեղեցին էր... Վերնաշենը գտնվում է Եղեզնածորից մոտ 5 կմ հյուսիս-արեւելք, լեռնալանջի վրա, բլուրների արանքում: Գյուղը Վերնաշեն է անվանվել 10.09.1946-ին: Մատենագիտության մեջ գյուղը նաեւ հիշատակվել է Բաշգյուր, Բաշքենո, Բաշքյանը անուններով: Ոմանք գյուղը նույնանցում են Սյունյաց աշխարհի Սարկողով գյուղին (մատենագիտության մեջ նաեւ՝ Սըրգոնք, Սղկոնք, Սրկղունիք եւ այլն):



Սյունյաց աշխարհի Վայոց ձոր գավառի այդ գյուղն ըստ Հին հարկացուցակի (13-րդ դար) Տաթևի վանքին տալիս էր 20 միավոր հարկ:

Վերնաշեն գյուղի բնակիչների նախնիների մի մասը գաղթել է Պարսկահայաստանի խոյ եւ Սալմաստ գավառներից, մասնավորապես Սալմաստի Սավրա գյուղից (1828-29 թթ.):

Վերնաշենի Սուրբ Հակոբը 17-րդ դարի կառույց է, որի պատերի շարվածքում կան 13-14-րդ դարերի շինության եւ խաչքարերի բեկորներ: Հին դարերում այդտեղ հռչակված է եղել Սրկղանքի դպրոցը, որը գործում էր մինչև 15-րդ դարի վերջը: ճանաչված ուսուցչապետներից էր Դավիթ գրիչ անունով ուսումնա-

կանը: Տեսակետ կա, որ հենց Վերնաշենում է գտնվել Պոռնյանների իշխանական պալատը՝ Սուրբ Հակոբի մերձակայքում:

Սուրբ Հակոբում պատի մեջ, կա Ամիր Հասանի բարձրաքանակը՝ բազալթոյի նստած (որդին՝ Եաչին կամ Եաչն կանգնած է). նրանք Պոռնյան իշխանական տոհմից են, իսկ քանդակները մեր քանդակարվեստի հրաշքերից են: Եկեղեցում կան նաեւ արձանագրություններ, որոնք վկայում են 14-15-րդ դարերում Պոռնյան տոհմի հզորության մասին:

Վերնաշեն գյուղից բարձրացանք վերել՝ դեպի Սպիտակավոր Աստվածածին... Ամբողջ ընթացքում հրաշալի պատկերներ էին՝ սարը՝ սարի վրա, ժայռը՝ ժայռի վրա, ձորը՝ ձորի մեջ... Եվ այդպես՝ 5 կիլոմետր:

Երբ մոտեցել էինք Սպիտակավորին, արեւելյան կողմում տեսանք երկնահաս Բուրբուրեղը: Մենք չէինք կարող բարձրանալ այդ ամրոց, դա մի ամբողջ օրվա ջանք էր պահանջելու: Բուրբուրեղը կամ Պոռնյաները կամ Պոռնյաները կամ Պոռնյան բերրող կառուցվել է 13-րդ դարում Պոռնյան իշխանի կողմից: Ավերակները, որ հեռվից մասամբ տեսանելի են, զբաղեցնում

Վանքը, ինչպես Նշեցինք, Վերնաշեն գյուղից 5 կմ հեռավորության վրա է գտնվում՝ Վարդեհիսի լեռնաշղթայի հարավային ստեղծերին: Հնում մտնում էր Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառի մեջ: Հիմնել է Հովհաննեսը իր կին Թաճի հետ միասին՝ 1320-21 թթ.:

են 1-1,5 հա տարածք: Ասում են՝ արեւելյան կողմում կա մի կանգուն մատուռ: Իսկ Սպիտակավոր Աստվածածնից բերող հեռու է մոտ 1-2 կմ:

Մենք դադար առանք ճանապարհին եւ հմայված դիտում էինք Բուրբուրեղը: Ու, բնականաբար, չէինք կարող չհիշել Պոռնյան տոհմին, որը պատմագիտության մեջ նաեւ խաղբակյաններ կամ Հաղբակյաններ է անվանվում: Միջնադարյան Հայաստանի իշխանական այդ տոհմը սերվել է Արցախի Առանշահիկ նախարարական տոհմից: Հայաստանի իշխանապետներ Զաքարյաններից 1201-03-ին ժառանգական իրավունքով նրանց տվեցին տիրույթներ Գառնիի կողմերում եւ Վայոց ձորում:

Խաղբակյանները բարեշինել եւ ամրացրել են Սրկղունք (հետագայում՝ Բաշքենո, ապա՝ Վերնաշեն) ավանը, ինչպես եւ Բուրբուրեղը եւ այն դարձրել իշխանախոս: Այդ տոհմի շառավիղներից էր (ըստ գիտական վարկածներից մեկի) Իսրայել Օրին (1659-1711 թթ.): Այդ տոհմի շառավիղներից էր Մելիք Հայկազն 2-րդի գերդաստանը, որը 15-16-րդ դարերում բացառիկ մեծ դեր խաղաց Սյունիքը եւ Արցախը պաշտպանելու գործում: Ի դեպ, Մելիք Հայկազն 2-րդի դամբարանը գտնվում է Խանձախ գյուղում, այն էլ՝ ավերված, կողոպտված վիճակում:

Սպիտակավոր Աստվածածին հրաշքը տեսանք մի փոքր հեռվից՝ լեռան ստորոտից: Կանգ առանք եւ փորձեցինք ոչ միայն վայելել այդ գեղեցկությունը, այլեւ տեղանքն ավելի լավ ճանաչել:

Քիչ հետո արդեն սրբավայրի տարածքում էինք...

Սպիտակավոր Աստվածածինը մատենագիտության մեջ նաեւ հիշատակվում է Սուրբ Աստվածածնի անապատ, Բաշքենոյի վանք, Բուրբուրեղի անապատ, Բուրբուրեղի Սուրբ Աստվածածին, Բուրբուրեղի անա-

պատ, Բոլորածորի անապատ, Գյուլվանք, Սուրբ Գրիգոր, Սուրբ Կարապետ, Սուրբ Կարապետ անապատ, Սուրբ Կարապետի ավագ անապատ, Կյուլվանք, Մարիամ Աստվածածին, Սուրբ Մարիամ Աստվածածին, Սուրբ Սպիտակավոր, Սպիտակավոր Սուրբ Աստվածածին, Սպիտակավոր վանք, Սրկոլոնից Սուրբ Գետրոս, Սրկոլոնից Սպիտակավոր Աստվածածին, Վերնաշենի Սպիտակավոր Աստվածածին անուններով:

Վանքը, ինչպես նշեցինք, Վերնաշեն գյուղից 5 կմ հեռավորության վրա է գտնվում՝ Վարդենիսի լեռնաշղթայի հարավային փեշերին: Հնում մտնում էր Սյունիք աշխարհի Վայոց ձոր գավառի մեջ: Հիմնել է Հովհաննեսը իր կին Թադի հետ՝ 1320-21 թթ.:

Վանքի համալիրի մեջ մտնում է դեղնավուն սրբատաշ քարով կառուցված գմբեթավոր եկեղեցին, որը ներսից խաչաձև է, դրսից՝ ուղղանկյուն: Արեւմուտքից եկեղեցուն կից է գավիթը, որի պատերին կան խորշեր, շրջապարիսպների մի մասը, օժանդակ շենքերի հետ պահպանվել են: Վանքի համալիրը հիմնավորապես վերանորոգվել է 1960-70 թթ.: Եկեղեցու պատերին կան հարթաքանդակներ եւ արձանագրություններ: Սուրբ Սպիտակավոր Աստվածածինը միջին դարերում եղել է գրչության կենտրոն:

Սպիտակավոր Աստվածածինը, այդուհանդերձ, համազգային նշանակություն է համբավ ձեռք բերեց այն բանից հետո, երբ այդտեղ՝ վանքի՝ ձորին նայող պատի ձախ կողմում 1987-ին հողին հանձնվեց հայ ժողովրդի քաջարի զորապետ Գարեգին Նժդեհի աճյունը:

Սպարապետ Նժդեհը մահացել է 1955-ին Ռուսաստանի Վլադիմիր քաղաքի բանտում, եւ նրա աճյունը հողին էր հանձնվել բանտի մերձակա գերեզմանատանը: 1983 թվականին մի խումբ հայրենասերների ջանքով՝ Պավել Անանյան, Վարազ Առաքելյան, Գարեգին Մխիթարյան, Արցախ Բուկիայան եւ Գուրգեն Արմաղանյան, Վլադիմիր քաղաքից Հայաստան տեղափոխվեց Գարեգին Նժդեհի աճյունը: Նույն տարում՝ հոկտեմբերի 7-ին, աճյունից մի մասունք ամփոփվեց Խուստուկի լեռան լանջին (մասունքը մեկ օր պահվել է Գորիսում՝ երջանկահիշատակ Անդրանիկ Կարապետյանի բնակարանում): Աճյունի մեծ մասը 1987-ին ամփոփվեց Սպիտակավորի Սուրբ Աստվածածին վանքի նշված վայրում:

Որտե՞ղ է մոտ չորս տարի պահվել Գարեգին Նժդեհի աճյունը: Վարկածներից մեկի համաձայն՝ պահվել է Վարազ Առաքելյանի առանձնատան ներքնահարկում՝ Կոտայքում:

ՀՀ առաջնորդ, Հայաստանի Հանրապետության վարչապետ Անդրանիկ Մարգարյանի նախաձեռնությամբ Նժդեհի գերեզմանը հետազայում վերաբացվել է ու աճյունից եւս մի մասունք է հանվել ու 2005-ի ապրիլի 26-ին տեղադրվել Կապան քաղաքում 2001 թ. կառուցված Նժդեհի հուշակոթողում:

Անկարագրելի էին մեզ համակած զգացումները, որ ունեցանք Գարեգին Նժդեհի գերեզմանին մոտենալիս... Մենք կարմիր վարդեր խոնարհեցինք Սպարապետի շիրմին: Եվ, իհարկե, երկար զրույց ունեցանք նրա գերեզմանի մոտ:

Բազալտե տապանաքար՝ վրան կարմիր տուֆից բանդակված խաչ... Երջանկահիշատակ Մովսես Գորգիսյանի նախաձեռնությամբ է այդ ամենն արվել ՌՏՁԹ թվականին (1989 թ.): Տապանաքարի վրա գրված է՝ *Նժդեհ Գարեգին Տեր-Հարությունյան, 1886-1955, Լեռնահայաստանի Սպարապետ*: Իսկ խաչքարի արեւմտահայաց կողմում



բանդակված է Նժդեհի մարգարեական պատվիրաններից մեկը՝ *«Սեփական ուժերով ինքնապաշտպանվելու անընդունակ ժողովուրդները պատժվում են մահվամբ»*:

Այնուհետեւ կատարեցինք մոմավառություն... Սպիտակավորի մեջ եղած բանդակներից մեկն Աստվածածնի բանդակն է՝ մանուկ Հիսուսին գրկած: Ենթադրվում է՝ Մոմիկ ճարտարապետ-բանդակագործի հրաշք արարումներից է:

Մենք, կարծեք, մեզ համար գտանք նաեւ հարցի պատասխանը, թե ինչո՞ւ հենց այդ վայրում է հողին հանձնվել Սպարապետի աճյունը: Ըստ երեւոյթին հաշվի է առնվել հատկապես հանգամանքը, որ Սպիտակավոր Աստվածածինը գրեթե անմաշտելի վայրում է (Ներկայիս «գոլուտային») ճանապարհն այն ժամանակ չկար): Հավանաբար հաշվի է առնվել նաեւ այդ տարածքի պատմական նշանակությունը, ինչին որոշ չափով անդրադարձ կատարեցինք վերելում:

Սպիտակավորից վերադարձի ճամփան բռնեցինք, երբ արդեն օրն ավարտին էր մոտենում: Իսկ սրբավայրի տարածքից հեռանալուց առաջ, երբ կրկին մոտեցանք Սպարապետի գերեզմանին, Գորիսի համայնքի ղեկավար Առուշ Առուշանյանը պատրաստակամություն հայտնեց՝ մոտ ապագայում համայնքապետարանի աշխատողներով շարաթորյակ կազմակերպել Սպիտակավորի տարածքում եւ սրբավայրն ու մերձակայքը մաքրել աղբից, խոտածածկից:

Վերադարձին կանգ առանք 13-րդ դարի վերջի եւ 14-րդ դար առաջին կեսի հայ մանրանկարիչ, բանդակագործ, ճարտարապետ Մովսիկ վարդապետի հուշակոթողի մոտ, որ եղեզնածոր քաղաքում է, Մ-2 ճանապարհի մերձակայքում, ինչից հետո էլ ավարտված համարեցինք ուխտագնացությունը:

ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

Հ.Գ. Գրիգոր Տաթևացին «Գիրք հարցմանցում», որ Սուրբ գրքի երբեկիցե գրված ամենահամակողմանի մեկնությունն է, պատասխանել է հարցին՝ «Ի՞նչ է ուխտը...» (Երեւան 2020, էջ 498): Եվ որոշակիորեն կանոնակարգել է այդ արարողությունը: Գրիգոր Տաթևացին մասնավորապես նշում է՝ «Ուխտը բարություն գործելն է...»:

Գարեգին Նժդեհի գերեզմանին այցի գնալը, անշուշտ, բարություն է եւ, դատելով Սպիտակավորում վառած անթիվ մոմերի հետքերից, շատերն են այցի գնում Սպարապետի շիրմին: Տվյալ սրբավայրը՝ Սպիտակավոր Աստվածածինը, բարեխոս դարձնելը նույնպես բարություն է, քանզի նրա բարեխոսությամբ Տիրոջ ողորմությունը հայցեցինք, որ Գարեգին Նժդեհի ազգափրկիչ գաղափարները վերստին տեղ գտնեն մեր ազգային ծրագրերում եւ պետական գործերում, որ հայ ժողովուրդը վեր բարձրանա ներկա ծնկաչոք վիճակից, որ Սյունյաց սրբազան հողում չարի սերմը բույն չդնի, ինչպես չի դրել հազարամյակներ շարունակ:

Գրիգոր Տաթևացին նշում է նաեւ՝ «Եվ յոթն են նրանք, որոնց ուխտի խախտումները անմեղադրելի են»:

Ուխտագնացության ընթացքում մենք մնացինք այդ կանոնների հրամանի ներքո... Եվ ուրեմն, ինչպես օրվա ավարտին ասաց Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ հոգեշնորհ տեր Մակար վարդապետ Հակոբյանը, «Սյունյաց երկրի» եւ Գորիսի համայնքապետարանի համատեղ ուխտագնացությունն ընդունելի լինի...

Ոչ մի պարագայում չի կարելի Սյունիքով տրանսպորտային միջանցք տրամադրել Ադրբեջանին, եթե այն փոքր-ինչ անգամ շրջանցելու է Հայաստանի ինքնիշխանությունը

Սկզբը՝ էջ 3

չունեն մեր պետության օկուպացված տարածքներից թշնամուն դուրս վերջնական հարցում, ապա որեւէ միջազգային խաղաղոց չի կարող օգնել Հայաստանին՝ լինի դա Ռուսաստանը, Իրանը, թե որեւէ այլ տերություն: Հետեւաբար՝ չափազանց կարեւոր են, նախեւառաջ, հայկական կողմի մոտեցումները եւ հատկապես իշխանության մոտեցումները: Եթե թշնամուն դուրս չարտելու մասին է խոսքը, ապա, ակնհայտաբար, քիչ հավանական սցենար է դա: Հայաստանի Հանրապետությունը պետք է ավելի համարձակ քաղաքականություն վարի: Եվ, ի վերջո, շատ կարեւոր մի հանգամանք կա՝ այն փորձագետները, ովքեր ճանաչում են Ադրբեջանը, գիտեն, որ այդ երկրի՝ հարաբերվելու համար գոյություն ունի ոչ թե իրավունքի ուժի, այլ բացառապես ուժի իրավունքի սկզբունքը: Հետեւաբար՝ որեւէ պարագայում Հայաստանի Հանրապետությունը չպետք է հանդուրժի իր տարածքի նույնիսկ մի աստիճանորի բռնազավթում ադրբեջանական օկուպանտների կողմից, եւ այդ պայմաններում է, որ միջազգային հանրությունից կարելի է ակնկալել օժանդակություն: Խոսքը նախեւառաջ վերաբերում է մեր ռազմավարական դաշնակցին, նաեւ բարեկամ երկրին՝ Իրանին:

– Տարակուսելի է ՀԱՊԿ-ի դիրքորոշումը՝ ըստ որի ադրբեջանցի զինվորների կողմից մեր տարածք ներխուժելը ՀԱՊԿ կանոնադրական խնդիրների շրջանակից դուրս է, տեղի ունեցածը սահմանային միջադեպ է ընդամենը: Ձեր կարծիք այդ առումով:

– Հայաստանի Հանրապետությունը պաշտոնապես դիմել է ՀԱՊԿ-ին ոչ թե ռազմական օժանդակության, այլ խորհրդակցություններ անցկացնելու խնդրանքով: Հենց նման դիմելածեւր ելքադրում է, որ Հայաստանը ՀԱՊԿ-ից ակնկալում է ոչ թե ռազմական օգնություն, այլ խորհրդակցություններ, որոնք, ըստ էության, տեղի են ունեցել: Սյունյաց կարեւոր հանգամանքն այն է, թե ինչպիսի հարաբերություններ է Հայաստանը կառուցել վերջին երեք տարվա ընթացքում ՀԱՊԿ-ի հետ: Արդյո՞ք այդ հարաբերությունները միտված են եղել նրան, որ անվտանգային խնդիրներ առաջանալու դեպքում ՀԱՊԿ անդամ պետությունները նաեւ ռազմական օժանդակություն ցուցաբերեն Հայաստանին, թե՞ դա միտված է եղել, ըստ էության, ճանաչելի հարաբերությունների ապահովմանը ՀԱՊԿ-ի անդամ պետությունների հետ: Ամենաիշխու բացատրությունը մերթքը բարդելն է մեզանից դուրս գտնվող կառույցների, կազմակերպությունների կամ այլ երկրների վրա: Այնինչ՝ հիմնական խնդիրը Հայաստանում է: Եթե մենք ռազմական առումով դիմադրություն թույլ չենք տալիս մեր հանրապետության տարածք ներխուժած բռնազավթիչ, ապա, թող ներվի ասել, որեւէ մեկը հայերի գեղեցիկ աչքերի համար չի գալու եւ չի կռվելու: Հայաստանի Հանրապետության տարածքի բռնազավթմանը վերջ տալու նպատակով:

Հետեւաբար՝ մենք պիտի գործենք եւ այդ գործելու ընթացքում կառուցենք այնպիսի հարաբերություններ, որպեսզի մեր բարեկամներն ու դաշնակիցները մեզ աջակցեն նաեւ հնարավոր ռազմական գործողությունների ընթացքում, առավել եւս, որ Հայաստանի Հանրապետության համար, կարծում եմ, խոշոր խնդիր չէր սկզբնապես 250 ադրբեջանցի բաշիբոզուկի մեր տարածքից դուրս շարտելը:

– Սյունիքի շուրջ, փաստորեն, ստեղծված են ռազմաքաղաքական նոր իրողություններ: Որո՞նք են, ըստ Ձեզ, հայաստանյան իշխանությունների սյունիքյան քաղաքականության գլխավոր ուղենիշները:

– Ցավոք սրտի՝ Հայաստանում, ըստ էության, չունենք իշխանություն, որ կունենա ծրագրային մոտեցում կամ տեսլական ոչ միայն կոնկրետ Սյունիքի մարզի, այլ ընդհանրապես Հայաստանի ապագայի նկատմամբ: Եվ այս համատեքստում ակնհայտ է՝ Հայաստանի Հանրապետությունը չունի որեւէ կոնկրետ քաղաքականություն, որը միտված է՝ առաջին՝ մեր անվտանգության ապահովմանը, երկրորդ՝ այդ անվտանգության ապահովման համատեքստում մեր դաշնակիցների եւ բարեկամների հետ հարաբերությունների կառուցմանը, երրորդ՝ չկա ընդհանրապես որեւէ տեսլական, որը ճանապարհային բարտեզով ամրագրված կլինի, եւ որտեղ մենք կտեսնենք, թե ի վերջո դեպի ուր է ընթանում Հայաստանը: Խնդիրներին տրվում են տարբերային լուծումներ, շատ հաճախ այդ խնդիրների լուծումն ուղղակի հետաձգվում է, ինչպես ասում են՝ թողնվում են բախտի քմահաճույթին, եւ, ըստ էության, վերջում ունենում ենք մի իրավիճակ, որ հենց նույն իշխանությունը բնութագրում է ճգնաժամային կամ մերձ ճգնաժամային:

– Եվ որպես գրույցի վերջաբան...

– Սյունիքի մարզում ապրող մեր եղբայրներին եւ քույրերին հորդորում եմ չհուսալքվել: Այո, իրավիճակը բավականին բարդ է, բավականին դժվար, բայց յուրաքանչյուր մարտահրավեր, ամեն մի դիմակ, ցանկացած վտանգ զուգահեռաբար ունի նաեւ հնարավորությունների լայն դաշտ: Համոզված եմ՝ մենք կարողանալու ենք որպես ազգ եւ որպես պետություն հաղթահարել բոլոր մարտահրավերները եւ կառուցել մեր երազանքի Հայաստանի Հանրապետությունը:

Հավերժ փառք Արցախյան պատերազմում նահատակված հայոց քաջորդիներին



Ջիվան Խաչատրյան. Նրա ներկայությամբ վեճերը բացառված էին

Խաչատրյան Ջիվան Ռոբերտի. ծնվել է 1994 թ. ապրիլի 26-ին Ազարակ բնակավայրում: Միջնակարգ կրթությունը ստացել է Ազարակ բնակավայրի միջնակարգ դպրոցում: Ամուսնացած էր՝ ունի մեկ որդի:

Դպրոցն ավարտելուց հետո գորակազմվել է բանակ, ծառայել Արա լեռան զորամասում: Չորսամյակից հետո շարունակել է ուսումը՝ սովորել եւ ավարտել է Մեղրիի պետական քոլեջի բեռնափոխարկումների կառավարում բաժնիը:

Աշխատում էր Ազարակի պղնձամուխիբե-
նային կոմբինատում բեռնատարի (Բելլազ) վարորդ:

2019 թ. հուլիսի 1-ին ամուսնացել է: Ջիվանի մասին գրուցում ենք մանկության ընկերոջ՝ Արայիկի հետ, «Ջիվանին բնութագրելու համար պիտի առանձնացնեմ նրա ամենատարբերվող հատկությունը՝ նվիրվածությունը, նա նվիրված էր բոլորին, կարող էր ինքն իրեն վնասել, բայց այնպես անել, որ իր հետ գործ ունեցող մարդիկ վնաս չկրեն: Նա ոչ մեկին չէր ասել, որ մեր (Մեղրիի) դիրքերից տեղափոխվել է Արցախ: Ես մի քանի օր նրան փնտրելուց հետո միայն հասկացա, որ Արցախում է: Մի առանձնահատկություն էլ ուներ՝ նրա ներկայությամբ պիտի ամեն ինչ լավ լիներ, որտե՛ւ լարվածություն, անհամաձայնություն, վեճ նրա ներկայությամբ բացառված էր: Կարողանում էր իր խոսքով մեզ կարել առօրյայից, նրա հետ հոգսերը մոռա-
նում էինք: Ասել, որ ավստում կամ ցավում ենք, նշանակում է՝ ոչինչ չասել, մեր ցավը շատ մեծ է, նրա հիշատակը միշտ վառ է մնա-
լու մեր սրտերում...»:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց: Ջիվանի որդին 17 օրական էր, Ջիվանը սյունեցի էր, իսկ սյունեցին իր տան պաշտպանությունն ուրիշին չի թողնում. նա եւս միացավ Ազարակի մերձակա դիրքերը հակող տղաներին: Արցախում դրությունն օրհասական էր. հոկտեմբերի 5-ին Ջիվանը կամավոր միանում է Արցախ մեկնող խմբին:

Հոկտեմբերի 11-ին թշնամու անօդաչուի հարվածից զոհվում է Ջիվանը՝ այրիանում է մի երիտասարդ հայուհի, փլվում է հայոց մի օջախ եւս. մի մանուկ կրելու է հերոսի անուկը որպես հայրանուն, բայց հայրական գուրգուրանքի մասին միայն մի քանի լուսանկար են պատմելու, որոնցում ինքը հոր ավի չափ է... //



Կարապետ Միրաբյան.

բացառիկ գիտելիքներով օժտված զինվոր էր

Միրաբյան Կարապետ Շավարշի, ծնվել է 2001 թ. սեպտեմբերի 20-ին Գորիս բնակավայրում: Սովորել է Գորիսի թիվ 1 միջնակարգ դպրոցում, որն ավարտել է գերազանց առաջադիմությամբ: 2019 թ. ընդունվել է Երեւանի պետական համալսարանի մաթեմատիկա եւ մեխանիկա բաժնիը: 2020 թ. հունվարին գորակազմվել է ազգային բանակ. ծառայության ուսումնական փուլն անց է կացրել Գյումրու հակառակակային գումարտակում: Ուսումնական փուլն ավարտելուց հետո տեղափոխվել է Արցախի Հանրապետություն, Մարտունու 2-րդ պաշտպանական ծառայում էր որպես հակատանկային դասակի հաշվարկի հրամանատար:

Ծառայությունից զոհ էր, կորուսված համավարակի պատճառով սահմանափակվել էին զինվորների եւ ծնողների տեսակցությունները, բայց Կարապետն ամեն կերպ հուսադրում էր ծնողներին, ասում, որ համավարակը նահանջելու է ու իրենք հանդիպելու են, ամենից շատ կրտսեր եղբայրը՝ Կարենն էր, սպասում համավարակի սահմանափակումների վերացմանը, քանի որ աշխարհում ամենամոտ ու հարազատ մարդուն տեսնելը նրա նվիրական երազանքներից էր դարձել:

2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. ծնողների անհանգիստ զանգերին ի պատասխան Կարապետը համոզում էր, որ իրենց մոտ ամեն ինչ հանգիստ է: Հետո միայն մայրը պիտի անկանար, որ որդին ծանր մարտերից առաջ էր զանգահարում ու ասում. «գնում եմ քնելու, հեռախոսն անջատում եմ...»:

Հոկտեմբերի 23-ին հակատանկային դասակը, որի կազմում էր Կարապետը, առաջադրանք է ստանում մտնել Ֆիզուլի/Վարանդա/, որն արդեն իսկ թշնամու ձեռքում էր: Ծանր ու դաժան մարտի ընթացքում զոհվում են դասակի բոլոր տղաները՝ բացի մեկից: Փորձեցինք կապ հաստատել միակ փրկված զինվորի հետ, բայց մեզ ասացին, որ ընկերների կորստի ցավն ու պատերազմում տեսածը դեռ թարմ են նրա հոգում. նա խոսել, որտե՛ւ բան պատմել չի ուզում:

Ամիսներ շարունակ ծնողները, հարազատներն ու Կարապետին ճանաչողները սպասել ու աղոթել են...

Փետրվարի 20-ին ՂԼԹ հետազոտությունը փաստեց՝ Կարապետ Միրաբյանը զոհվել է...

Փետրվարի 22-ին Գորիսի զինվորական պանթեոնում զինվորական պատիվներով հողին հանձնեցին 19-ամյա հայ զինվորին, ով պիտի լավ մաթեմատիկոս դառնար, ում գավակները դեռ պիտի ծնվեին ու ժառանգեին բացառիկ բնավորության ու գիտելիքի տեր Կարապետի գեները... //



Վարդան Մովսիսյան. «Մեզ պատիվ չի բերում պարտվելը՝ մենք զանգեզուրցի ենք»

Վարդան Մերոյցյանի Մովսիսյան. ծնվել է 1983 թ. նոյեմբերի 30-ին Քաջարան բնակավայրում: Սովորել է Քաջարանի N1 միջնակարգ դպրոցում: 2001-2003 թթ. ծառայել է հայոց բանակում: Չորսամյակից հետո աշխատանքի է ընդունվել «Հանգեզուրի պղնձամուխիբ-

եռնային կոմբինատ» ՓԲ ընկերությունում՝ ելեկտրաէներգետիկ: 2007 թ. ամուսնացել է՝ ունի երեք որդի:


Վարդան Մովսիսյանի մասին գրուցում ենք կնոջ հետ. նա կոտրված է, ասում է. «Ցավը ժամանակի ընթացքում պակասելու փոխարեն, սառչող վերքի պես սաստկանում է»: Ամուսնուն նկարագրում է լավագույն բառերով. շշտում նրա մեծ սերը հայրենիքի հանդեպ: Մի տեսակ չի հաշտվում, որ ամուսինն իր ու երեք որդիների կողքին չէ, որ ինքը պիտի առանց նրա շարունակի ապրել ու իրենց զավակներին մեծացնի հենց այնպիսին, ինչպիսին երազում էր Վարդանը:

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանը պատերազմ սկսեց. Վարդանը կամավորագրվեց Արցախի վրա հարձակման մասին լսելուց մի քանի ժամ անց եւ մեկնեց ռազմաճակատ:

Վարդանը ռազմադաշտի հարավային թեւում էր՝ Ջրակում/Ջաբրայիլ/, ծանր մարտեր էին, թշնամին գրոհում էր բազմաթիվ անօդաչուներով, հրետանիով ու մարդուժով:

Վարդանի հետ մարտադաշտում ծանոթացած տղաների հետ ենք գրուցում. «Մի քանի օր ենք ճանաչել, հպարտ եմ, որ նրա նման տղայի կողքին եմ կռվել, զաղակարական մարտիկ էր, գիտեր ուր է եկել եւ ինչու: Պատերազմի օրերին՝ հիմնականում գիշերը, երկար գրուցում էինք. նա պնդում էր, որ պարտավոր ենք Արցախը պահել, որովհետեւ մեզ պատիվ չի բերում պարտվելը՝ մենք զանգեզուրցի ենք...»:

Հոկտեմբերի 10-ին Վարդան Մովսիսյանի կյանքի ընթացքն ընդհատվեց անօդաչուի հարվածից. Վարդանը զոհվեց ու չի մացավ, որ իր երազած հաղթանակին չհասանք, չի մացավ, որ թուրքը հասել է Հանգեզուրի դշերին ու զանգեզուրցու կռիվը չավարտվեց... //



Վաչե Պետրոսյան. պատերազմը խլեց լավագույններին

Վաչե Արարատի Պետրոսյան. ծնվել է 1996 թ. Այոնիքի մարզի Սիսիան բնակավայրում: Միջնակարգ կրթությունը ստացել է Սիսիանի համար N 2 դպրոցում: 2014 թ. ընդունվել է 2018 թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ պատմության ֆակուլտետի կրկնասագիտության բաժնիը, ապա շարունակել կրթությունը Նույն բաժնի մագիստրատուրայում (անվճար): Օգտվելով տարկետման հնարավորությունից՝ ընդունվել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարան. մեկ տարի անց՝ գերազանց ավարտելով ռազմական համալսարանը, գորակազմվել է բանակ՝ որպես սպա ծառայել Կապանի զորամասում:

Վաչեի մասին մեզ եղբայրն է պատմում, ծայրը դողում է, բայց խոսքերում միայն հպարտություն է. «Իմ եղբայրն ամեն տեղ լավագույնն էր»:

Կապանի զորամասի հրետանային մարտկոցի հրամանատար, կապիտան Արամ Մանուկյանը հուզվում է Վաչեի մասին խոսելիս. «Մասնագիտության մեջ գերազանց գարգացած ու պատրաստված սպա էր, չնայած, որ ինքը կադրային սպա չէր, այլ մեկ տարի էր սովորել: Քաջատեղյակ էր պատմությանը, իր պարած դասերի ժամանակ թերություններ չէր հանդուրժում: Կողեկտիվին նվիրված, գիտակցող, հրամանատարության եւ զինվորների

հարգանքը վայելող, կյանքով լի տղա էր: Սեպտեմբերի 27-30-ը անդադար, առանց քնելու վարել է մարտական գործողությունները, անսխալ ու հմուտ ղեկավարել մարտը: Մինչեւ չարաբաստիկ սեպտեմբերի 30-ն ինքն ու իր դասակն անվնաս էին, բայց տեղափոխության ժամանակ թշնամու անօդաչուն նկատել է ու խփել մեքենային: Ափսոս, հազար ավստս...»:

Սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի ծավալած լայնամասշտաբ պատերազմում լեյտենանտ Վաչե Պետրոսյանը գործել է գիտակից հրամանատարի հատուկ հմտությամբ, արդյունքում անսխալ վերացված թիրախներ, հաղթանակի անզնահատելի հպարտություն...

Պատերազմը խլում է լավագույններին. 2020 թ. սեպտեմբերի 30-ին զոհվում է լեյտենանտ Վաչե Պետրոսյանը՝ երիտասարդ հայ սպան, ով իր երկրին սիրահարված էր պատանու խնթություններ եւ պատմաբանի իմաստությամբ: //



Սարգիս Պողոսյան-Ապեր. զոհվեց, որ խաղաղ լինի երկինքը

Սարգիս Սամվելի Պողոսյան. ծնվել է 1990 թ. հունիսի 22-ին Այոնիքի մարզի Կապան բնակավայրում: Սովորել է Կապանի N3 միջնակարգ դպրոցում: 2007 թ. ընդունվել է 2012 թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական համալսարանը՝ տնտեսագետ-ֆինանսիստ մասնագիտությամբ: Ծառայությունն անց է կացրել Վարդենիսում:

2011 թ. ընդունվել է աշխատանքի ՊԼ ՀՕԳ զորքերում, տասը տարի աշխատել ռադիոլուկացիոն կայանի ավագ օպերատոր: Ապերը հմուտ ծառայող էր. նրա մասնագիտական բարձր հմտությունների արդյունքում վերացվել են հակառակորդի բազմաթիվ ԱՌՍ-ներ:

Սարգիսն աշխատավայրում հարգված էր. ինչպես բնորոշում են գործընկերները, նա համեստ, լուսկյաց, հարգալից երիտասարդ էր, մեծահոգի ու անշահախնդիր ընկեր... //

2020 թ. սեպտեմբերի 27-ից մինչեւ հոկտեմբերի 9-ը՝ մոր ծննդյան օրը, Ապերը տուն չէր գնացել: Մայրն արցունքների միջից ծայրում է՝ տղան այդ օրն իրեն ամենամեծ նվերը մատուցեց՝ իր ներկայությունը՝ դառնալով քաղցր հիշողություն ու հուշ:

2020 թ. հոկտեմբերի 10-ին հակառակորդի անօդաչուն հարվածում է Երիվանքի ռադիոլուկացիոն կայանին, վիրավորվում են Սարգիսը, Գրիշան եւ նրանց օգնության եկած Ալիկը:

Սարգիսը, ներկաների պատմելով, իր ծանր վիճակը մոռացած, հանում է գոտին ու մեկնում Գրիշային, խնդրում է, որ առաջինը նրան վիրահատեն, որ չարահասի, չզիտակցելով, որ Գրիշան արդեն զոհվել է: Բժիշկները մի քանի ժամ պայքարել են Սարգիսի կյանքի համար, բայց՝ ապարդյուն: Վիրավորվելուց ժամեր անց զոհվեց Սարգիսը՝ ծնողների միակ արու զավակը, ով պիտի շարունակեր Պողոսյան ազգանունը, ում զավակները պիտի դառնային իր շարունակության ու հավերժանալու գրավականը, ավստս... //

Հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայության» մեդալով:

ԷՅԻ ՆՅՈՒԹԵՐԸ ՊԱՏՈՒՍՏԵՑ
ՏԻՊՈՒՆՈՒՅԻ ԲԱՆԱԼՅԱՆԸ

«Մթնաձոր»-ի հերոսը

Սկզբը՝ №554 (12)-ում

Անտառապետ Գանինը նաև ուրիշների հետ շարունակեց ծանոթանալ իր ընկեր Բակունցի հայրենիքին և գնալով Նրա առաջ բացվեց զարմանալի մի կուսական աշխարհ: Այստեղ, առաջվա պես, կյանքի ընթացքը դանդաղ էր ու անվրդով: Կատարի պղնձահանքը բացառություն էր, գյուղատնտեսական էր Չանգեզուրի գավառը: Երեկվա պես մարդիկ զբաղվում էին իրենց ակազափ հողակտորի մշակությամբ և անասուն էին պահում: Հարգված էին մաճկալն ու սերմնացանը, հովիվն ու գառնարածը: Արդեն փորձեր էին արվում ստեղծելու գյուղատնտեսական կոոպերատիվներ, հողամշակության մեջ ներդրել մշակարույսերի նոր սորտեր և բուծել նոր ցեղերի կենդանիներ: Նոր իշխանությունը դրան ուզում էր հասնել անգրագիտության վերացման ճանապարհով:

Մարդիկ ավելի շատ հագնվում էին հին տարազով: Գանինը շուտ հասկացավ, որ մեծերը զուգա էին, երիտասարդները՝ ամոթխած: Ունևոր չէին, բայց սրտաբաց էին: Օտարը չէր կարող անցնել նրանց տան մոտով՝ առանց հյուրասիրվելու: Հետաքրքրատեր էին, անձանտիկն կամ բաղաբից եկածին բաց չէին թողնում իրենց հարցերով, ուզում էին իրենք էլ իմանան մեծ աշխարհի անցուդարձից, պատմածին համապատասխան՝ անսթոր գարմանում, տիրում և ուրախանում էին: Օրերը բացվում և մթնում էին թռչականչով: Հովիտներում անուշահամ մրգերն էին հատունանում, անտառներում՝ հատապտուղները, իսկ ալպիական բարձունքներում իրար բերանից պատառ էին խլում նարգիսը, մանուշակը, գանգակածաղիկը, արևքուրիկը, ուրցն ու նունուֆարը, որոնց հրապուրանքն օրհներգում էին սիրազեղ արտույտները: Գարնանն ու ամռանը օդը հագեցած էր սրտահաճ բույրերով, աշնանն ու ձմռանը՝ առուց սարսուռներով:

Գյուղերից մեկով անցնելիս Բակունցը մոտեցավ ճամփեզրի հողիկանման շինությանը: Գանինը հետևեց նրան: Ներսում նստած մեկը, սփածանելիքով ծածկված, կաշվե բուրդերով տրեխ էր գործում: Չարհուրելի էր: Մարդը նման էր խրտվիլակի, գանգը մաշկ չուներ. ամվողովին կլաված էր, միայն ականջներն էին ցցված: Բացակայում էին շրթունքները, խոսքերը խռչոցի էին նման: Անհասկանալի էր՝ համաճառ հագուստի տակ մա՞րդ է, թե՞ կենդանի: Նրա արձակած ձայներն էլ անորոշ էին, անհասկանալի էր՝ գայրանու՞մ է, թե՞ ժպտում: Իսկ այս արարածը եղել էր սովորական մարդ, որսի սիրահար: Տասնհինգ տարի առաջ սա ընկերոջ հետ գնում է անտառ արդեն վիրավոր արջին սպանելու: Երբ մտնում են մի թափուտ, կատաղած արջը ելնում է որսորդների դիմաց: Ընկերը վատաբար փախչում է, մեր հերոսը կրակում է արջին, որը սակայն գոռալով հարձակվում է որսորդի վրա: Վիրավոր արջի և մարդու միջև տեղի է ունենում անավոր մենամարտ: Արջը թայթով հարվածում է մարդու ծոծրակին, ճանկերը խրում մաշկի մեջ և բաշտելով պոկում մարդու գլխի ու դեմքի ողջ մաշկը: Վրա հասած մարդիկ սպանում են արջին, ազատում որսորդին, որին շուտով տանում են բարոս բուժելու, բայց նրա գլուխը մնում է մաշկազերծված:

Գանինի հայացքը ամեն օր ընդգրկում, իսկ միտքն ընկալում էր նորանոր բաներ, որոնք սովորական էին լեռնաբնակների համար, ուստի «չէին տեսնում» դրանք: Իսկ այս աշխարհում բնության կախարհանքին զուգորդված էին հին ժողովրդի անցած կյանքի ազատ օրերի լուռ վկա հրաշակերտ հուշարձանները՝ հողերը շինությունները, խաչքարերը, դեռ խորածորների անդրորդ հսկող բերդերը, իշխանական պալատները, կամարավոր բարե կամուրջները, սրանոցները, ջրաղացները և բարավանային ճանապարհները: Եվ այստեղ ապրողներն ամեն մեկի համար ունեին ավանդազուրկ, հեքիաթ և առասպել: Նրանք էլ զավեշտալի զրույցներ էին հորինում իրար և հարևան գյուղերի մասին, գրեթե բոլորն էլ ունեին փուտ անուն: Մի օր անտառապետն արշավի գնաց երևանից եկած հնագետների հետ: Չարմանալի բան.

Նրանք գոհունակություն հայտնեցին, որ շատ բան անտառը վաղուց իր գիրկն էր առել, բանի որ հնությունները փրկվել էին եղծումից:

Ինչպես մարդն անտառբեր անցներ այն բյուրեղացույք Կաթավի աղբյուրի մոտով և գոնե մի բուռ ջուր չխմեր, որն իր անուևը ստացել էր ձագերին կորցրած մայր կաթավի արցունքներից: Մի ճամփաբաժնի վրա էլ բարե դեզ էր բարձրանում այն եզի պատվին, որ մեկնակ ու հոժարաբար Տաթևի վանքի կառուցման համար կրել էր ողջ բարը, կիրը, ավազն ու ջուրը: Մի օր ցույց տալով բարին տաքացող խլեզները՝ Բակունցն ասաց.

– Դրանք գեղեցկուհի բույրեր են եղել: Երբ թշնամիները մտել են Սյունիք, հասել են նաև սրանց գյուղը, ու որպեսզի անօրենների ձեռքը չընկնեն և պղծվեն, փրկվելու արդեսանքով դիմել են աստծուն, որը նրանց խլեզ է դարձնում:

Իր տիրույթներից մեկում անտառապետն օգնականի հետ հանդիպեց մեկի, ով տղայի հետ մամռակալ պատերով կիսավեր շինության մոտ պատրաստվում էր չոր փայտ բարձել ջորիներին: Նորեկի ռուսերեն բարևին գյուղացին պատասխանեց վախվորած, բանի որ առանց «բիլեթի» էր անտառ մտել:

– Ոչինչ, հաջորդ անգամ թղթով կգաս, - հանգստացրեց անտառապետը: - Կարևորն այն է, որ գեջ ծառ չես կտրել: Կարո՞ղ ես ասել՝ այս ավերակն ի՞նչ շինություն է եղել:

Վախվորած մարդը մեկնեց փոփվեց, ոգևորվել և հաճույքով սկսեց պատմել: Սա հրաշագործ վանք է եղել: Երբ թշնամիները հարձակվում են այս կողմերի վրա, վանքի վարդապետն ուզում է փրկել Սուրբ Խաչը, իրեն զցում է մոտիկ հոսող զետը և աստծո զորությանը, թշնամու զինվորների աչքի առաջ, սկսում բայել գետի ջրերի վրայով: Չարմացած զինվորները տեսածի մասին հայտնում են խանին: Աստծո պատժին չարժանանալու համար խանը գալիս է վանակալի մոտ և ասում. «Ես թեզ կյանք եմ շնորհում, և ինչ ուզես, կկատարեմ»: «Խանն ապրած կենա, - ասում է վանակալը, - այ, այս եկեղեցով մեկ տուր քեզ մոտ եղած իմ հավատակից գերիներից»: Խանը համաձայնում է: Հայ գերիների բերում, հ՛ա, բերում են, իսկ վանքը չի լցվում: Չարմացած խանը մտնում է եկեղեցի և տեսնում, որ վանակալի արդթթով ներս մտածները դառնում են աղավախ, թռչելով դուրս գալիս պատուհաններից: Հրաշքից ազդված խանը գորթն առնում ու հեռանում է Սյունիքից:

... Տղայի լացից Գանինը սթափվեց: Նայեց պատի ժամացույցին, մոտենում էր ձմեռնամուտի լուսաբացը: Վիրավորանքից բռնկված մտքերը չէին հանդարտվել: Մի՞թե Նատայան ճիշտ չէր թարգմանել պատմածքը, նրանում կերտված անտառապահի կերպարը գուցե որևէ առևտրություն չու՞նի՞ իր հետ, չէ՞ որ իր ընկեր Բակունցը լավ գիտեր իր ով լինելը: Որ գլխավոր հերոսներից մեկը՝ անտառապահը, ինքն էր, կասկած չկար, բանի որ այս կողմերում միակ ռուս անտառապահն էր՝ անտառապետի տարագով, կոկարդե գլխարկը գլխին: Արդեն երկու տարի ինքն էլ գանգեզուրցի էր, Ավու «համերկրացին», բայց որևէ առևտրություն չէր ունեցել այդ խրտվիլակի հետ, իրենց ճանապարհների հատվելու առիթ չէր եղել, իսկ գրողը բերել, հակադրել ու ընդհարել է տվել նրանց, անմեղ մարդուն մահվան դուռը հասցրել:

Սակայն ի վնաս անտառապետի գլխավոր ապացույցն անմեղ Ավուն հոգեառ դարձած մյուս հերոսի՝ Պանին ազգանունն էր, որն, անշուշտ, առաջացել էր Գանինի առաջին տառի փոխմամբ: Գրող ընկերը դրանով չէր բավարարվել, իր կյանքի պատմությունից հանել, հավելել ու հարմարեցրել էր նաև այլ բաներ, որ իբր թե՛ Պանինը չունի ազգություն և հավատք, դաժան է անասելի և հոգով այնքան է այլանդակված, որ կատարի որսաշներին կեր է դարձրել կնոջը: Գրողը գիտեր չէ՞, որ անտառապետ Գանինը Չանգեզուր գալուց հետո արագ լավ անուն էր վաստակել, նա համերաշխ էր գյուղացիների հետ, նրանք էլ զոհ էին իրենից: Բայց արի ու տես, որ Պանին ազգանունով ներկայացող անտառապետը չարահնար մի հրե է, որի մտրակի հարվածներից ծռնվում է անտառ մտած մարդը: Սա

կոպիտ շեղում էր ճշմարիտ իրականությունից, ինքը երբեք մտրակ չէր ունեցել ու մարդ չէր ծեծել:

Սա էլ մի կողմ: Իբրև՝ մի անգամ ինքը Մթնաձորում հանդիպում է լավ որսորդի համբավ ունեցող արդար Ավուն, որը տան ապրուստի մի մասը հոգում էր բացատներում միրհավ որսալով, արտերի մոտ՝ կաթավ ու լոթ, և թակարդ էր լարում աղվեսի համար ու ծմակները գնում վարագի որսի: Հերթական անգամ Ավին բռնվում է հանցանքի վայրում անտառում ծառ կտրելիս: Անտառապետը մտրակահար չի անում, երանի մտրակահար աներ, բանի որ դնում է չսված ու չտեսնված մի պայման՝ գողության համար բասն ռուբլի տուգանք վճարել կամ էլ Մթնաձորից մի արջ սպանել: Քսան ռուբլին հսկայական գումար էր աղքատ գյուղացու համար, ուստի գնում է արջի որսի: Մնացածը գանգամաշը կլաված այն գյուղացու պատմությունն էր, որին Բակունցի հետ միայն մեկ անգամ էր տեսել: Եվ դա չի խանգարել իր գրող ընկերոջը, որ, ազգանվան մեկ տառը փոխելով, իրենից ստեղծի մի հակամարդ թերմոսք: Եվ ինչո՞ւ դրա համար իրեն միևնու հոգու խորքը վիրավորված չզգար Չանգեզուրի բարեհամբավ ռուս անտառապետը:

Բակունցը Գորիսում չէր երևում, ասում էին, թե նոր պաշտոն է ստացել, տեղափոխվելու է Երևան: Մեկ շաբաթ անց անտառապետը նրան դեմ առ դեմ հանդիպեց գավառագործովի մուտքին և, երեսը շրջելով, ուզեց չտեսնելու տալ: Սակայն պատմվածքի հեղինակը, նախկին հողաշինարարի պես, զվարթ տեսքով մեկնեց ձեռքը՝ ողջունելով. «Չորավստովո՞ւ, Գեյնյա»: Ասվածը, կարծես, Գանինին չէր վերաբերում, ցուցադրաբար երեսը շրջած էր պահում: Գրողը նորից բարևեց ռուս ընկերոջը, ու երբ նորից պատասխան չստացավ, հայտնեց զարմանքը.

– Այս ի՞նչ լու է կծել սրտակից ընկերոջս, երեսը շրջել ու բարևիս չի պատասխանում:

Գանինը լուռ էր, դեմքից վիրավորանք էր կայծում:

– Գեյնյա, ինձ չե՞ս ճանաչում, ես քո ընկեր Ակսելն եմ, ինչո՞ւ բարևիս չես պատասխանում:

– Նրա համար, որ ես անարժան մեկն եմ ձեզ բարեկամ լինելու, ընկեր պատմվածքագիր, - անցնելով պաշտոնական դիմելածին՝ արձագանքեց անտառապետը: - Ինչպե՞ս ես խաբվել՝ ձեզ նվիրված ընկերս կարծելու համար:

– Իսկ դու, Գեյնյա, ինձ համար շարունակում ես սրտակից ընկեր լինել, - չհապաղեց ասել գրողը: - Չարմացած եմ, կասե՞ս ինչ է պատահել, բան չեմ հասկանում, վիրավորված ես երևում:

– Նրա համար եմ վիրավորված, որ ձեզ համար պատմվածք եք գրել և ինձ որպես մի հրե էք ներկայացրել, - պայթեց Գանինը: - Փոխել էք ազգանվան առաջին տառը, բայց դա չի փրկի, այս կողմերում հայերեն կարդացող բոլորն են հասկացել, թե ձեր անտառապահ Պանինն ով է: Գլխավոր շրջել էք ճիշտ ապրած կյանքիս պատմությունը: Նոր եմ իմանում՝ կենսագրությամբ մի դաժան արարած եմ եղել, և՛ այնքան անմարդկային, որ անգամ կնոջս եմ շներին հոշոտելու տվել: Դե, նման մարդու համար ռժվար չէր լինի գյուղացուն արջորսի ուղարկելն ու խրտվիլակ դարձնելը: Լավ գիտեք, չէ՞, որ այն մարդուն թեզ էր հպակցիկ մեկ անգամ եմ տեսել:

– Ա՛, ահա թե ինչու ես երեսը շրջում ինձանից: Պատմվածքս բառացի ես հասկացել, սիրելի Գեյնյա, գրականությունն իր օրենքներն ունի, - ցանկացավ ընկերոջը հանգստացնել Բակունցը: - Պարտավոր եմ ընկերոջս հանդեպ ազնիվ լինել: Այո, Պանինի նախատիպը դու ես, բայց պատմվածքում արդեն դու չես: Ավանդակի ժանրով գրելու դեպքում պարտավոր էի քո ասածի պես ճշտորեն շարադրել մարդու կերպարը՝ վավերագրել: Փորձել եմ պատմվածք գրել՝ նպատակ ունենալով սուր հակադրության մեջ դնել բարուն և չարին, ուստի, հետևելով գեղարվեստական ճշմարտության պահանջին, բոլորովին նոր կերպար եմ ստեղծել: Թե ինչ է ստացվել, հիմա՞ ընթերցողը, հետո ժամանակը կասի:

– Իսկական ընկերս ինձ հեռու կպահեր նման «պատվից», - արդեն փափկած պատասխանեց անտառապետը:

– Նորից եմ ասում, իմ սիրելի ընկեր՝ հիմքում եղել է քո կերպարը, սակայն աշխատության մեջ նա շատ հեռու է թեզանից: Եթե իմ արարքով վիրավորել եմ թեզ, որպես ավագ ընկեր՝ կլինես մեծահոգի և կներես, -

ծագած «պատերազմին» հրադադար առաջարկեց գրողը: - Ես վաղվանից հիմնական աշխատանքի եմ մեկնում Երևան, և լավ չի լինի, որ բաժանվեմք խռոված: Եվ հետո, մտածում եմ, որ աննշան բանից մեծ խնդիր ես հնարել, կարող է պատահել, որ գրականության մեջ կարևոր կերպար դառնա Մթնաձորի սարսափ Պանինը: Ի դեպ, Երևանից ոգևորող կարծիք եմ ստացել: Հիմա ձեռքը տուր, խաղաղություն ամենեցուն: Դե, միևնու նոր հանդիպում, ողջունիր Նատայային և իմ փոխարեն համբուրիր ժիր ժորժիկ թշիկը:

Բակունցը մեկնեց Երևան, իսկ վիրավորանքը կարճ մնաց ռուս ընկերոջ հոգում: Սակայն դա էլ շուտով մոռացվաց: Գանինին երկու ամսից անտառապետի պաշտոնով տեղափոխեցին Իջևան: Անցած մանր բաների մասին մտածելու ժամանակ չուներ, ծավալուն և պատասխանատու գործի էր նշանակված: Այստեղ անտառներն ավելի մեծ տարածքներ չէին զբաղեցնում, սակայն դարավոր կաղնիներից, հաճախելիներից, բոխիներից և հացենիներից կազմված գանգվածներն ունեին արդյունաբերական նշանակություն: Ուստի Հայաստանի կառավարությունը որոշում էր կայացրել դրանց հարստությունը ծառայեցներ հանրապետության տնտեսության զարգացմանը՝ հիմնել փայտամշակման ձեռնարկություններ: Այժմ արդեն այստեղ անհրաժեշտ էր ոչ թե եղածի լավ պահպանում, այլև խորագիտակ անտառային մասնագետ, որը կկարողանար ճիշտ ընթացք տալ մեծածավալ հատումներին, կանխել դրանց ուղեկցվող խախտումները, հատված տարածքներում տնկումների շնորհիվ անտառը վերականգնել և պատրաստել նոր մասնագետներ: Վերևներում այդ գործի համար հարմար էին գտել Գանինին:

Ռուս անտառապետի միտքը լիովին զբաղված էր կարևոր հարցերով, Բակունցի կերտած Պանինի կերպարն էլ մոռացել էր: Սակայն երբեք տարի անց Նատայան, որը Իջևանում նորաստեղծ փայտամշակման գործարանում այլուստ աշխատանքի հրավիրված ռուսախոս մասնագետների երեխաների ուսման համար դպրոց էր բացել, մի երեկո ամուսնուն ցույց տվեց ռուսերեն ոչ շքեղ կազմով մի գրքույկ և խնդմուղալով ասաց.

– Դե, ամուսնյակս, հիմա քո հարագատ լեզվով կարող ես կարդալ քո նմանակ Պանինի պատմությունը, որից հ՛ ես էի վիրավորված, և՛ դու, պարզվում է՝ իզուր:

– Ակսել Բակունց, «Տյունյե ուշգիլե», - գիրքը ձեռքն առնելով՝ կարդաց Գանինը: - Սա որտեղի՞ց է հայտնվել մեր տանը:

– Մերոնք են ուղարկել Թիֆլիսից: Տպագրվել է Մոսկվայում, - պատասխանեց կինը: - Նրանք նամակով նաև հայտնում են, որ լավ ընդունելություն է արժանացել: Գրական ասպարեզ է եկել շնորհալի նոր անուն:

Քիչ անց Իջևանի անտառապետը գրքի անուևը կրող ոչ մեծ պատմվածքը կարդաց մի բանի անգամ: Կարդալով հարագատ ռուսերենով՝ ավելի լավ հասկացավ գրողի ասելիքը: Բակունցը գյուղաշինարարի անմեղ ծնունդ, արջերոց եղած այն խրտվիլակի և իր նախատիպով ստեղծված խրտվիլակ անտառապահի բախումից խորապես տպավորվող գրական գործ էր կերտել: Նա իր հայրենիքում նկատել էր ոչ միայն սքանչելի կուսական բնությունը, այլև այնտեղ մարդուն պատած դառը ցավերը և դրանք ներկայացրել բարուն՝ արդար Ավու, և չարի՝ բիրտ ու դաժան անտառապահ Պանինի հակադրությամբ: Եվ իզուր էլ ինքը տարիներ առաջ գրող ընկերոջը վիրավորանքն էր արտահայտել: Հիմա ո՞վ է հիշում, որ անտառապահ Պանինի նախատիպը Գորիսում ապրած իրական մարդ է եղել, բայց նա գրողի գրչի տակ պատմվածքի մասուն հերոս էր դարձել:

Միևնու գրողի անժամանակ բացակայում Գանինը նրա հետ երևանում հանդիպեց ոչ մեկ անգամ, և երբեք չհիշեցին գործիսյան միջադեպը, երբ ինքն՝ առանց խորամուկ լինելու, ընկերոջից խռովել էր իրենից հակամարդու կերպար ստեղծելու համար: Շատերի պես արգելվեցին նաև Բակունցի գործերն ու անուևը: Միայն տանը Նատայայի հետ, ուրիշ ականջներից հեռու, հիշում էին իրենց անմոռաց բարեկամին: Նրանք վկա եղան նաև նրա վերադարձին, և այդ օրերին Գանինն իր մտերիմ ուսուցիչ Գորիսի Զատայանի պատմեց, որ «Մթնաձոր»-ի անտառապահ Պանինի նախատիպը եղել է ինքը և այդ առիթով թեթև ընդհարում է ունեցել անմահների շարքն անցած ընկերոջ՝ Ակսել Բակունցի հետ:

Ծնունդդ շնորհավոր, մեծավաստակ վետերան

Մեր կողքին ապրում են մարդիկ, ովքեր անցել են ինը տասնամյակի սահմանագիծը, եւ իրենց ապրած կյանքը շատ բան կարող է տալ ապրողներին: Առանցից մեկը Չավեն Կարապետի Կոստանյանն է՝ ծնված 1927 թ. Ղափանում: Նախնիներն Արեւմտյան Հայաստանից են: Մեծ եղեռնից հետո ապաստանել են Շուշիում, հետո՝ տեղափոխվել Ղափան, որտեղ աչք է բացել Չավենը:



սագետի եւ արտադրության կազմակերպիչի Նրա լավագույն որակները: Խորհրդային երկրում եւ Նրա սահմաններից դուրս հայտնի էին այլուրից գործարանի արտադրատեսակները եւ մեծ պահանջարկ ունեին: Պատասխատվությունը մեծ էր այլուրից գործերի կոլեկտիվում աշխատելը, եւ նա արդարացրեց այդ պատասխանատվությունը: Երկար տարիներ աշխատեց այդ ձեռնարկությունում՝ մինչեւ Խորհրդային Միության փլուզվելը:

Կոստանյանի աշխատանքային ուղին Մեծ հայրենական ռազմաքաղաքական օրերից է սկսվում: Երբ սկսվեց պատերազմը, ընդամենը 14 տարեկան էր: Ցանկանում էր մեկնել ռազմաճակատ, բայց զինկոմիսարիատում խստորեն արգելեցին: 1944-ին Չավենը հանքավայրում էր, այնուհետեւ անցավ կոմերիտական աշխատանքի: «Քաջարանչիկ» կոմերիտական կազմակերպության ազատված բարտուղարն էր, մեկ տարի հետո Քաջարանի բանվորական մատակարարման բաժնում էր: 1951-ին Նշանակվել է «Քաջարան» բազմաուսուցանիս թերթի պատասխանատու բարտուղար, հաջորդ տարի տեղափոխեցին Չավենը պղնձամոլիբդենային կոմբինատ՝ ավագ տնտեսագետ, հետո՝ կոմբինատի պլանային-տնտեսագիտական

Կոստանյանը պարգևատրվել է ՀԽՍՀ Գերագույն խորհրդի պատվոգրով: Ի դեպ, նա արժանացել է նաեւ մեդալի՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին թիկունքում բարեխիղճ ու Նվիրված աշխատանքի համար (կոմբինատում ֆրեզերագործ էր): 1947-ին ամուսնացավ Լարիսա Բաղդասարյանի հետ, ով գործուղմամբ աշխատում էր Քաջարանում, ունեցել են երկու զավակ՝ Վալերի եւ Կարինե: Ի դեպ, Չավեն Կոստանյանը ԽՍՀՄ քիմիական արդյունաբերության մինիստր, ԽՍՀՄ պետական եւ լենինյան մրցանակների դափնեկիր Լեոնիդ Կոստանյանի հորեղբորդին է:



Գործը պատվով դիմավորեց Արցախյան 44-օրյա պատերազմի մասնակից Հայաստան աշխարհի խիզախ արծիվների

Առաջին բանակային կորպուսի և Գործիսի Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի ջանքերով՝ Արցախի Հանրապետությունում ծառայող ՊԲ-ի զորացրվող զինվորներին Գործիսում դիմավորեցին մեծ շուքով: Օրը տոնական դարձրին կայազորի զինվորական նվագախումբը, Գուսան Աշոտի անվան մշակույթի կենտրոնի մեներգիչները և Վահե Մելքոնյան պարային ստուդիայի սաները: Միջոցառմանը ներկա էին զորացրվող զինծառայողների հարազատներ, Գործիսի համայնքապետարանի, Սյունիքի մարզպետարանի, ՊԼ Չորակոչային և զորահավաքային համալրման ծառայության Սյունիքի մարզի տարածքային ստորաբաժանման ներկայացուցիչներ, ինչպես նաև Գործիսի ԵՎՄ անդամներ: Չորացրվող զինծառայողների կողքին կանգնած էին նաև նորակոչիկները՝ իրենց աչքի առաջ ունենալով հերոս տղաների սխրանքն ու անցած ուղին:

ԳՈՐԻՍԻ ՀԱՄԱՅՆԱՎՈՐՈՒՄ

Կրակոցներ Գործիսում. կան վիրավորներ. Սյունիքի Նախկին մարզպետի աներորդու վիճակը ծայրահեղ ծանր է

Երեկ, հուլիսի 13-ին, կրակոցներ են հնչել Գործիսում: Ժամը 00:30-ի սահմաններում Գործիսի բժշկական կենտրոնից Ոստիկանության Գործիս բաժնի ահազանգ է ստացվել որ հրազենային վնասվածքներով իրենց մոտ են տեղափոխվել երկու բաղաբացի: Shamshtyan.com-ը հայտնում է, որ հիվանդանոց է մեկնել ոստիկանության խումբը: Հիվանդանոցում բժիշկները ոստիկաններին և քննիչներին հայտնել են, որ վիրավորները ի վիճակի չեն կատարվածի մասին տեղեկություններ տալու բանի որ գտնվում են վիրահատարանում: Պարզվել է, որ նաև Գործիս բաղաբացի բնակիչներ Հարություն Կարախանյանն ու Մելիքետ Բարսեղյանն են, ովքեր հիվանդանոց են տեղափոխվել Գործիս բաղաբացի Ակսել Բակունցի հուշարձանի հարակից տարածքից: Ըստ տեղեկությունների՝ Նշված վայրում մարտաֆիլմ հիշեցնող փոխհրաձգություն է տեղի ունեցել, որի ժամանակ էլ Նշված անձինք վնասվածքներ են ստացել: Կայքի տեղեկություններով, վիրավորներից 3. Վարդանյանը Սյունիքի մարզպետ Մելիքետ Պողոսյանի ընկերն է, իսկ Մ. Բարսեղյանը Սյունիքի Նախկին մարզպետ Սուրիկ Խաչատրյանի աներորդին է: Հաշվի առնելով հանցագործության վտանգավորության աստիճանը դեպքի վայր է ժամանել նաև Սյունիքի մարզի դատախազը: Դեպքի վայրում հայտնաբերվել է ինքնաձիգի արձակված մեծ թվով կրակված պարկուճներ և արևանման հետքեր: Փաստի առթիվ Գործիսի քննչական բաժնում հարուցվել է քրեական գործ ՀՀ քր. օրի 112հոդվածի 1-ին մասի և 235 հոդվածի 1-ին մասի հատկանիշներով: Լրատվամիջոցների փոխանցմամբ, Սուրիկ Խաչատրյանի աներորդու վիճակը ծայրահեղ ծանր է, նրան տեղափոխել են Երևան:

Կորել է // Կապանի բժշկական ուսումնարանի 1996 թ. շրջանավարտ Մարինե Ժորայի Թումանյանի դիպլոմը՝ AK081623(սերիա): Համարել անվավեր:



բաժինն էր դեկավարում, որտեղ աշխատեց մինչև 1962 թվականը: Աշխատանքին զուգահեռ 52-ին ընդունվել է 57-ին ավարտել է Մոսկովյան համալսարանի քիմիական հեռակա տնտեսագիտական ինստիտուտը: Որպես լավագույն մասնագետի՝ փոխադրել են Երեւանի Քանաքեռի այլուրից գործարանի պլանային բաժնի պետ, որտեղ հավուր պատշաճի դրսևորվեցին տնտես-

Հուլիսի 17-ը մեր հայրենակցի ծննդյան օրն է. շնորհավորենք աշխատանքի եւ պատերազմի վետերանին (իրավամբ այդպես կարելի է համարել), նրան մաղթենք ամուր առողջություն, բովանդակալից առօրյա, իր զավակների ու թոռների հաջողություններով հպարտանալու բազում պահեր:

ՎԱՀՐԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ» ՊՈԱԿ-ը Հայտարարում է մրցույթ քոլեջի ներքոգրյալ թափուր հաստիքների համար

- «Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ /1 դրույք/,
- «Կապի սարքավորումների մոնտաժում և շահագործում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ /1 դրույք/,
- «Օգտակար հանածոների հարստացում» մասնագիտության արտադրական ուսուցման վարպետ /1 դրույք/,
- «Համակարգիչների շահագործում» մասնագիտության դասախոս /1 դրույք/,
- «Համակարգիչների գեղարվեստական նախագծում» մասնագիտության դասախոս /1 դրույք/.

Հաստիքներին ներկայացվող պահանջներն են.

- Բարձրագույն մասնագիտական կրթություն կամ միջին մասնագիտական կրթություն և տվյալ մասնագիտական զբաղվածության բնագավառում աշ-

խատանքային փորձ

Մրցույթին մասնակցելու համար անձը ներկայացնում է հետևյալ փաստաթղթերը.

1. Դիմում,
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ/դիպլոմ՝ բնօրինակը և պատճենը/
3. անձնագիր/ բնօրինակը և պատճենը/,
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք / առկայության դեպքում/
5. ինքնակենսագրություն
6. մեկ լուսանկար՝ 3x4 չափի,
7. ՀՀ արական սեռի ներկայացուցիչները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ/բնօրինակը և պատճեն/:

Փաստաթղթերը ընդունվում են քոլեջի ուսումնական մասնաշենքում, 2-րդ հարկ, սենյակ 211 ս/թ հուլիսի 20-ից օգոստոսի 2-ը, ժամը 10.00-15.00: Մրցույթի անցկացման օրը՝ օգոստոսի 6-ին, ժամը 10.00, սենյակ 205: Մանրամասների համար դիմել՝ syunikcollege@rambler.ru: Հասցե՝ ք. Կապան, Գ. Արզումանյան 11ա, հեռախոս՝ (0285) 5 30 61:

Սյունյաց երկիր
ՀԻՄՆԱԴՐԻ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎ ԴԱՏԱՍԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏԴԱԳՐՎՈՒՄ ԵՎ ԶԵՆՈՒՄ: ՀՈՒՆՅԱՆ 1-ԻՑ:
Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyer.kir@mail.ru
www.syuniacyer.kir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում եւ հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության եւ հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Կրթությունը ներկայացնելու մեթոդագիտական վիճակում:
«ԳՐՎԱԾԴ» - ԾԱՆՈՒՑՈՒՄ բաժնում

տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:
Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: Թղթակցության նյութերը գրվածքային կրթությունը Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:
Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպագրական թիվը՝ 1030, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.07.2021թ.: